ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4920-Ա « 08 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.446-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 28-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 18-ի հ.446-Ա որոշումը՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց հ.2 հասցեի 3787.3քմ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15092022-01-0260 վկայական/, ինչպես նաև դրա մուտքի ու ելքի կազմակերպման համար նախատեսված 1165.90քմ մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները «անտառային» նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիա փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15092022-01-0260 վկայականը, Երևան քաղաքի ավագանու 2025թվականի նոյեմբերի 18-ի հ.446-Ա որոշումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15092022-01-0260 վկայական:

Համայնքային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է Երևան համայնքին պատկանող Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց հ.2 հասցեի հողամասում կառուցել մանկապարտեզի տիպային մասնաշենք և ներկայումս մուտք ու ելքի կազմակերպման համար առաջանում է սահմանների ճշտման անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ քննարկվող հողամասերն ընդգրկված են անտառային հողերի կազմում:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 18-ի հ.446-Ա որոշմամբ Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց հ.2 հասցեի 3787,3քմ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15092022-01-0260 վկայական/, ինչպես նաև դրա մուտքի ու ելքի կազմակերպման համար նախատեսված 1165.90քմ մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները «անտառային»

նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/7408-25 և Ն/71333-25 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց հ.2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի մակերեսը կազմում է 4953.20քմ (3787.30քմ+1165.90քմ), որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց հ.2 հասցեում գտնվող 4953.20քմ (3787.30քմ+1165.90քմ) հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 18-ի հ.446-Ա որոշման հիման վրա, սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հասարակական կառուցապատման:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ